# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019թվականի N 10

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Դիմիտրով համայնքի ավագանու 2019 թվականի ապրիլի 8-ի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական տարեկան բյուջեով իրականացվող Հայաստանի Հանրապետության համայնքներին տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների տրամադրման ծրագրին մասնակցելու մասին:
2. Դիմիտրով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի N35-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:
3. Դիմիտրով համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 9 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՎԱՆՈՎ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 ապրիլի 2019թվականի N 11

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 42-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունվարի 31-ի N62-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով 2019 թվականի մարտի 5-ի հանրային լսումների արձանագրությունը համայնքի ավագանին որոշում է՝

1. Նպատակահարմար համարել համայնքի մասնակցությունը Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական տարեկան բյուջեով իրականացվող Հայաստանի Հանրապետության համայնքներին տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված համայնքներին սուբվենցիաների տրամադրման ծրագրին :
2.Արարատի մարզպետարան ներկայացնել ,,Դիմիտրով համայնքի Մ. Մաշտոցի, Կորոլյովի, Մայակովսկու փողոցների ասֆալտապատման աշխատանքներ,, ծրագրի սուբվենցիայի ամբողջական փաթեթը:
3. Արարատի մարզպետարան ներկայացնել ,,Դիմիտրով համայնքի մանկապարտեզի վերանորոգում,, ծրագրի սուբվենցիայի ամբողջական փաթեթը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԻՈՆԱՆՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

### Ո Ր Ո Շ Ու Մ

08 ապրիլի 2019թվականի N 12

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիմիտրով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը մշակելու և ներկայացնելու նպատակով, համայնքի ղեկավարը առաջարկեց համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում ավելացնել պայմանագրային աշխատողի մեկ հաստիք՝ զարգացման ծրագրերի պատասխանատու, 107000 դրամ դրույքաչափով:

Առաջնորդվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասին 28-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածով համայնքի ավագանին որոշում է.

Դիմիտրով համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 5-ի <<2017 թվականի համար Դիմիտրովի համայնքապետարանի աշխատակազմի, մշակույթի տան և մանկապարտեզի աշխատակիցների քանակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> N35-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը.

1. 1-ին կետում՝ <<13>> թվի փոխարեն կարդալ <<14>>:

2. 2-րդ կետի <<ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ>> բաժնում նոր տողով ավելացնել հաստիք՝ <<Զարգացման ծրագրերի պատասխանատու>>, հաստիքային միավոր՝ <<1>>, պաշտոնային դրույքաչափ՝<<107000>> դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԽՈՆԱՆՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
## ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Դիմիտրով, (094)730000, dimitrov-gyuxapetaran@mail.ru

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ապրիլի 2019թվականի N 13

### ԴԻՄԻՏՐՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով և 33-րդ հոդվածով և նկատի ունենալով այն հանգամանքը, որ համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18-ի թիվ 9 որոշումը կայացվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ի մասով հաստատված կարգի 13-րդ կետի պահանջի խախտումով ՝ համայնքի ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2019 թվականի փետրվարի 18 –ի << Համայնքի ավագանու 2006 թվականի հունիսի 28-ի <<Համայնքի փողոցները անվանակոչելու մասին>> թիվ 4/2-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին>> թիվ 9 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.
<< Գ. Նժդեհի փակուղի >> բառակապակցությունը փոխել <<Գ. Նժդեհի փողոց, 1-ին փակուղի>> բառակապակցությամբ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՂԱԶԱՐՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ

ՄԿՐՏՉՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԱՆ ԽՈՂԱՆՈՎ